ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Սրբազան արարողությունը հանդիսապետում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Քահանայից լսարանի շրջանավարտ ինը սարկավագներ ստացան քահանայական աստիճաններ: Ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Հովհաննես սրկ. Յապարյանը կոչվեց Տ. Վարագ, Սահակ սրկ. Ղազարյանը՝ Տ. Աշոտ, Խոսրով սրկ. Եսայանը՝ Տ. Թորոս, Սամվել սրկ. Խանոյանը՝ Տ. Շիրակ, Արմեն սրկ. Աշուրյանը՝ Տ. Մովսես, Հովհաննես սրկ. Գրիգորյանը՝ Տ. Հակոբ, Անդրեյ սրկ. Սարգսյանը՝ Տ. Նշան, Գարեգին սրկ. Համբարձումյանը՝ Տ. Արսեն, և Գևորգ սրկ. Մկրտչյանը՝ Տ. Պսակ:

Ներսես Սրբազանը այնուհետև դիմելով նորընծա քահանաներին, մաղթեց. «Սիրելի քահանա եղբայրներ, ահավասիկ օծումը կատարեցինք ձեր քահանայության: Ամեն մեկիդ նոր անուն տվեցինք, ամեն մեկդ դարձաք նոր մարդ: Եվ իբրև նոր մարդ՝ Սուրբ Հոգով ներշնչված, Սուրբ Հոգով սնված և աստվածային շնորհներով օժտված, դուք վաղը նոր պաշտոնի պիտի անցնեք մեր ժողովրդի կյանքի մեջ: Թող Աստված ձեր առջև ծառացած բոլոր դժվարությունները վերացնի, թող Սուրբ Հոգին իր շնորհները բաշխի ձեր առօրյա հովվական կյանքի մեջ և ձեզ զորավիգ կանգնի: Ուր էլ որ ծառայեք, պիտի հիշեք Աստծո ողորմածությունը ձեր վրա և նաև չմոռանաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի օրհնությամբ է, որ դուք այսօր քահանայական պատիվն զգեցաք»:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ Ս. Խորան բարձրացան և նորընծա քահանաներին շնորհավորեցին նաև Մայր Աթոռի միաբանները:

Մայր Աթոռում իրենց քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նրանք կնշանակվեն հովվական ծառայության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՍՊԱԼՅԱՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է
ՆՈՐ ՁԵՌՆԱԴՐՎԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՕԾՈՒՄԸ

ԿՈՒՍՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԻՆԵՐԻ ՇԻՐՄԱՅԱՍԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ Ս.Օ.Ս.Ղ. ԿԱՐԵՊԵՏ ԳԱՅԻՆԻ ԿԱՊԱԼՈՎ ՀՈՍԿԵՓԱՐԻ ՑԱՅՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱՅԻՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տ. ՎԱՐԱԳ ՔԱՀԱՆԱ ՅԱՊԱՐՅԱՆ

(Ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1976 թ. օգոստոսի 8-ին Լենինականում:

1982-1992 թթ. սովորել է Գյումրիի Անանիա Շիրակացու անվան թիվ 16 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

1996 թ. ապրիլի 28-ին, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի ձեռամբ, ձեռնադրվել է սարկավագ և ծառայել Ս. Աստվածածին եկեղեցում:

1997-1998 թթ. ստանձնել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանի վերակացուի պաշտոնը:

1998-1999 թթ. Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանի միջնորդությամբ մասնակցել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 5-րդ լսարանի դասընթացներին որպես ազատ ունկնդիր:

1999 թ. սեպտեմբերից մինչև հունվար մասնակցել է ԵՊՀ-ի Աստվածաբանական ֆակուլտետում դասավանդվող կրոնական առարկաների դասընթացներին որպես ազատ ունկնդիր:

2000 թ. հունվարից մինչև ուսումնական տարվա վերջը վերստին եղել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանի վերակացու:

2000-2003 թթ. եղել է Շիրակի թեմի առաջնորդարանի քարտուղար:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. օգոստոսից Շիրակի թեմի առաջնորդարանի քարտուղարն է:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Վարագ քահանա:

Տ. ԱՇՈՏ ՔԱՀԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

(Ավազանի ունունը՝ Սահակ)

Ծնվել է 1974 թ. Էջմիածին քաղաքում:

1981-1991 թթ. սովորել է Էջմիածնի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1991-1998 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000-2005 թթ. ուսանել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Զագորսկի հոգևոր ակադեմիայում:

2006 թ. աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում:

2006 թ. ապրիլի 25-ին պաշտպանել է ավարտաճառ «Տոտալիտար աղանդները և ապակառուցողական պաշտամունքների գործունեության մեթոդները» թեմայով:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Աշոտ քահանա:

Տ. ԹՈՐՈՍ ՔԱՀԱՆԱ ԵՍԱՅԱՆ

(Ավազանի անունը՝ Խոսրով)

Ծնվել է 1976 թ. հունիսի 29-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 11 միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Ներսիսյան վարժարանում:

1993-1997 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1997-1999 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1999-2000 թթ. ուսումը շարունակել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. պաշտպանել է ավարտաճառ «Հովհաննես Կոզեռն Տարոնացին և կոզեռնյան վախճանաբանական հայացքները» թեմայով:

2001-2003 թթ. եղել է Մայր Աթոռի պարետ:

2003 թ. երեք ամիս սովորել է Իսպանիայում:

2003 թ. օգոստոսին հոգևոր ծառայության է անցել Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Թորոս քահանա:

Տ. ՇԻՐԱԿ ՔԱՀԱՆԱ ԽԱՆՈՅԱՆ

(Ավազանի ունունը՝ Սամվել)

Ծնվել է 1978 թ. հունիսի 28-ին Գորիս քաղաքում:

1984-1995 թթ. սովորել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1995-2001 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. աշխատել է նախ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնում, ապա Վեհարանում՝ որպես գործավար քարտուղար:

2002-2005 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2004 թ. պաշտպանել է ավարտաճառ «Ստեփաննոս Լեհացին և Մայր Աթոռի միաբանության հոգևոր զարթոնքը» թեմայով:

2005 թ. մայիսից նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում վերակացու:

2005 թ. նոյեմբերից ծառայության է անցել Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդության Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Շիրակ քահանա:

Տ. ՄՈՎՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԱՇՈՒՐՅԱՆ

(Ավազանի ունունը՝ Արմեն)

Ծնվել է 1977 թ. հունիսի 23-ին Էջմիածին քաղաքում:

1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

1991 թ. հաճախել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի և մասնակցել արարողություններին:

1992-1995 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

1995-2001 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002-2004 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2004 թ. ծառայության է անցել Մայր Աթոռի մկրտարանում:

2004 թ. պաշտպանել է ավարտաճառ «Մաշտոց ծիսարանի սուրբգրային վկայակոչումները» թեմայով:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Մովսես քահանա:

Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1980 թ. հուլիսի 8-ին Արարատի մարզի Գետազատ գյուղում:

1986-1997 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1998-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. օգոստոսի 17-ից հոկտեմբերի 18-ը ծառայել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴՔԿ-ում որպես գործավար-քարտուղար:

2004 թ. հոկտեմբերի 18-ից մինչև 2005 թ. սեպտեմբերի 7-ը աշխատել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում որպես վերակացու:

2005 թ. սեպտեմբերի 7-ից ծառայության է կոչվել Արագածոտնի թեմում՝ նախ Օշականում՝ որպես թեմի առաջնորդական տեղապահի հոգևոր-կրոնական հարցերով օգնական, ապա՝ 2005 թ. նոյեմբերի 15-ից մինչև 2006 թ. սեպտեմբերի 1-ը՝ Կարբի գյուղում որպես Ս. Աստվածածին եկեղեցու սարկավագ:

2006 թ. սեպտեմբերի 1-ից ծառայում է ՀՀ Զինված ուժերում որպես զորամասի հոգևոր սպասավոր:

2006 թ. սեպտեմբերի 28-ին պաշտպանել է ավարտաճառ «Պապ Արշակունի թագավոր» թեմայով:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Հակոբ քահանա:

Տ. ՆՇԱՆ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

(Ավազանի ունունը՝ Անդրեյ)

Ծնվել է 1982 թ. նոյեմբերի 14-ին Էջմիածին քաղաքում:

1989-1993 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2005-2006 թթ. ծառայել է Մայր Տաճարում որպես լուսարար:

2006 թ. մարտի 15-ին պաշտպանել է ավարտաճառ «Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկը» թեմայով:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Նշան քահանա:

Տ. ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

(Ավազանի ունունը՝ Գարեգին)

Ծնվել է 1978 թ. հոկտեմբերի 27-ին Արագածոտնի մարզի Օշական գյուղում:

1985-1995 թթ. սովորել է տեղի Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցում միաժամանակ 1986-1993 թթ. սովորելով տեղի երաժշտական դպրոցում:

1996-1998 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1998-2001 թթ. մասնակցել է Մայր Աթոռի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչական կենտրոնի կողմից Թալինում կազմակերպված կրոնի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:

2001-2002 թթ. Հայոց Եկեղեցու պատմություն և կրոնի դասընթաց է դասավանդել Արագածոտնի մարզի Կարբի գյուղում:

2000-2003 թթ. որպես լուսարար ծառայել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

2002-2005 թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի հեռակա բաժնում:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Արսեն քահանա:

Տ. ՊՍԱԿ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

(Ավազանի ունունը՝ Գևորգ)

Ծնվել է 1978 թ. մայիսի 7-ին Երևանում:

1985-1995 թթ. սովորել է մայրաքաղաքի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան թիվ 66 միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի անասնաբուժական ֆակուլտետում:

2000-2002 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. հոկտեմբերի 1-ից ծառայության է նշանակվել Երևանի Ս. Երրորդություն եկեղեցում:

2006 թ. հունվարի 22-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ վերանվանվելով Տ. Պսակ քահանա: